

Շ Ա Պ Կ Ի Ե Ր Գ Ը

(Thomas Hovd)

Մատները թմրած ու մաշուած էին,
Աչքի կոպերը ուռած ու կարմիր—
Հին շորեր հագած՝ հալումաշ մի կին
Նստած՝ կարում էր եռանդուն ու ժիր.

Կարէր ու կարէր...

Հէգ ու չքաւոր, խեղճ ու վշտակիր...
Ողբագին ձայնով, տխուր ու տրտում՝
Մի շապկի մասին նա երգ էր ասում.

Վաղ-հաւախօսին զարթնում է քնից
Եւ շապկի կարում մինչեւ կէս-գիշեր.
Կիսափուլ իր տան յարկի ճեղքերից
Ներս են թափանցում աստղերի շողեր.
Տանջւում է օրպէս քրիստոնեայ մի կին,
Որ անգութ թիւրքի ձեռքին է գերի—
Աւաղ, մի գերի, որ էլ բնաւին
Թշնամու ճանկից փրկութիւն չ'ունի:

Աշխատիր անգուլ, գործիր անտրտունջ՝
Մինչդեռ չէ յաղթել քեզ քունը յամառ,

Աշխատիր անխոնջ մինչև վերջին շունչ,
Քանի քո աչեր չեն մարած իսպառ.

Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Շուշալիր, խրճրակիր ու կարիր,
Մինչև շապկիդ վրայ ընկնես քնահար
Եւ քնիդ մէջ էլ կարես անդադար:

Դժբ, որ ապրում էք ուրախ չըջանում,
Ունիք մայր ու քոյր, կին ու ազգականք,
Այն՝ ինչ հագնում էք և անփոյթ մաշում,
Ոչ թէ կտաւ է, այլ չարքաշ մի կեանք.

Կարիր ու կարիր..
Հէգ ու չքաւոր, խեղճ ու վշտակիր...
Կարում եմ ահա շապիկ ու—պատան
Եւ ամեն ըսպէ ըսպանում մահուան:

Բայց, աստ, մահից էր վախենամ ես,
Թէկուզ այդ հիւրը դար ինձ մօտ այսօր.
Ձէ որ ժանտ մահի ուրուականին պէս՝
Մի չոր կըմախք եմ—լոկ մօրթ ու ոսկոր,
Հիւծուած մի մարմին, չարատանջ մի կեանք,
Կըտոր հացից զուրկ և ծով օրն ի բուն.
Ա՛խ, ինչո՛ւ, ո՞վ Տէր, հացը այդպէս թանգ,
Իսկ այսպէս էժան իմ միսն ու արիւն:

Աշխատիր անվերջ, թափիր ճիգ ու ջանք,
Այս ծանրը ժամերն, աւաղ, վերջ չ'ունին.
Իսկ ի՞նչ է իմ վարձք—չոր հացի փշրանք,
Հընամաշ շորեր, յարդէ անկողին,
Սեղան ու աթոռ՝ հասարակ փայտեայ,
Յատակ, առաստաղ՝ խաբխուլ ու աւեր.
Լաւ է՝ որ գոնէ մերկ պատի վրայ
Մերթ թրթռում է իմ միակ ըստուեր:

Տանջուիր անխընայ, ժամէժամ տընիր
Եւ միշտ նստակեաց գործիր օրավարձ
Որպէս յանցաւոր մի տաժանակիր՝
Աքսոր ուղարկուած անյոյս ու անգարձ.

Աշխատիր, աշխատիր, աշխատիր,
Շուլալիր, խըծըպիր ու կարիր,
Թէկուզ քո գլուխ թեքուի ուժասպառ,
Եւ սիրտ ու ձեռքըդ թուանան իսպառ:

Կարիր ու կարիր ձմրան օրերում,
Նոյնպէս դարնանը—օրեր զովարար,
Երբ ծիծեռնակը իր բոյնն է հիւսում՝
Գարնան վերադարձ տօնելու համար,
Իսկ ձագուկները կուշտ ու ապահով
Միշտ ճուղողում են իրանց մօրը հետ,
Կարծես ուզում են ուրախ երգերով
Ինձ ծաղրի բռնել ու հեգնել յաւէտ:

Ա՛խ, մէկ դուրս գայի դաշտեր բացօդէայ,
Ի՜նչպէս բուրում են վարդերն անուշակ...
Միայն երկինքը լինէր իմ վըրայ,
Միայն դալար խոտ իմ ոտների տակ.
Ո՛հ, թէ ինձ հիմայ վիճակուէր մի ժամ
Մանկական կեանքիս անհոգ ժամերից,
Երբ վախ չ'ունէի, թէ ես մի անգամ
Ազատ ման դալով՝ կը զրկուեմ ճաշից.

Ո՛ւր էր՝ գէթ մի ժամ սրտայոյզ իմ ցաւ
Ինձ խեղճիս ազատ ու հանգիստ թողնէր.
Ա՛խ, միշտ յուսահատ ու սիրոյ ծարաւ,
Դառն է իմ կեանքը, տխուր իմ օրեր.
Գէթ մի քիչ լացը կը մեղմէր իմ վիշտ,
Բայց, ա՛խ, ոչ մի եւթ չը կայ ինձ համար.
Արցունք, կանգ առէք, թողէք ինձ հանգիստ,
Թէ չէ չի լինի կարըս միաշար:

Մատները թմրած ու մաշուած էին,
 Աչքի կոպերը ուռած ու կարմիր—
 Հին շորեր հագած՝ հալումաշ մի կին
 Նստած՝ կարում էր եռանդուն ու ժիր.

Կարիր ու կարիր...

Աղքատ ու տնանկ, խեղճ ու վշտակիր....
 Հեծում էր, երգում հեգ ու լալագին.
 Ա՛խ, թէ գէթ հասնէր վէս հարուստներին
 Այս կնոջ երգը մի շապկի մասին...

Թարգմ. բնագրից Ա.ԲՐԱՀԱՄ Մ.-ՋԱՆԵԱՆ